ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԴԵՂՁՈՒՏԻ ՄԻՋՆ.ԴՊՐՈՑ
ՊՈԱԿ
գ.Դեղձուտ (04206775)
Էլ.Փոստ deghdzut@schools.am
Բջջ. 094779217

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКИЙ РЕГИОН
СРЕДНЯЯ ШКОЛА
ДЕХЦУТ
с. Дехцут (04206775)
Эл. почта deghdzut@schools.am
Моб. 094779217

07/09/2023թ.

ՀՀ Արարատի մարզի մարզպետ
պարոն Ս. Թևոնյանին

Հարգարժա՛ն մարզպետ

Տեղեկացվում է, որ «ՀՀ Արարատի մարզի Դեղձուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում առաջացել է «Ֆիզիկա» (11 դասաժամ), «Երաժշտություն» (8 դասաժամ), «Ազգային երգ ու պար» (1 դասաժամ), «Հայոց լեզու և գրականություն» (10 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղ: Թափուր տեղը լրացնելու համար հայտարարվում է մրցույթ:

Կից ներկայացվում է հայտարարության տեքստը:

Տնօրեն՝ / Արմինե Կարապետյան /

Հայտարարվում է մրցույթ՝ <<ՀՀ Արարատի մարզի Դեղձուտի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի «Ֆիզիկա» (11 դասաժամ), «Երաժշտություն» (8 դասաժամ), «Ազգային երգ ու պար» (1 դասաժամ), «Հայոց լեզու և գրականություն» (10 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում՝ (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

- անձը հաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

-ինքնակենսագրություն (Ձև 5),

-թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ:

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 13-ից մինչև սեպտեմբերի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00}-ից 15^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 3-ին՝ ժամը 14^{00}-ին, ՀՀ Արարատի մարզի Դեղձուտի միջնակարգ դպրոցում: Հասցեն՝ գ. Դեղձուտ, Հ. Շիրազի 43, տեղեկությունների համար զանգահարել՝ (094)779217 և (098)839565 հեռախոսահամարներին: